ՀՏԴ 82-9

Լրագրություն

Անուշ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի ասիստենտ
E-mail: anush.dolukhanyan.91@gmail.com

Մարտա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի «Լրագրություն» մասնագիտության IV կուրսի ուսանողուհի
E-mail:harutyunyanmarta-2@asu.am

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ «REGNUM» ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(Ղարաբաղյան 44-օրյա պատերազմի օրինակով)

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը մշտապես գտնվել է տեղական և միջազգային ՁԼՄ-ների ուշադրության կենտրոնում, որոնք, ըստ իրենց տեղեկատվական քաղաքականության նպատակների և խնդիրների, յուրովի են մեկնաբանել այն: Այս տեսանկյունից առանձնանում է «Regnum» ռուսական լրատվական գործակալությունը, որում տեղ գտած թեմատիկ հրապարակումների վերլուծությամբ ընդգծվում է Լեռնային Ղարաբաղի 44-օրյա պատերազմի հակամարտության լուսաբանման տիպաբանությունը:

Բանալի բառեր՝ Regnum» լրատվական գործակալություն, տեղեկատվական քաղաքականություն, ՁԼՄ, Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, Ռուսաստանի Դաշնություն, խաղաղապահ զորակազմ:

А.Долуханян, М.Арутюнян

ТИПОЛОГИЯ ОСВЕЩЕНИЯ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В ИНФОРМАЦИОННОМ АГЕНСТВЕ «REGNUM»
(на примере 44-дневной карабахской войны)

Нагорно-карабахский конфликт всегда находился в центре внимания местных и международных СМИ, которые в соответствии с целями своей информационной политики интерпретировали его по-разному. С этой точки зрения

выделяется российское информационное агентство «Регнум», которое анализирует публикации и подчеркивает типологию освещения 44-дневной войны в Карабахе.

Ключевые слова: Информационное агентство «Regnum», информационная политика, СМИ, Нагорно-карабахский конфликт, Российская Федерация, миротворческие силы.

A.Dolukhanyan, M.Haroutunyan

THE TYPOLOGY OF KARABAKH CONFLICT COVERAGE IN REGNUM NEWS AGENCY

(Following of the Examle of the 44-day Karabakh War)

The Nagorno-Karabakh conflict has always been in the spotlight of local and international media,which,in accordance with their information policy goals interpreted it in different ways.From this point of view, the Russian news agency «Regnum»stands out, which, by analyzing the publications, emphasizes the typology of courage of the 44-day Karabakh war.

Key words: *«Regnum» news agency, Information policy, Mass media, Nagorno-Karabakh conflict, Russian federation, peace keeping troops.*

Զանգվածային լրատվության միջոցներն առավել քան երբևէ հանրային կարծիք ձևավորելու, այն խմբագրելու կամ նենգափոխելու գործիք են դարձել, ասել է թե՝ բացի իրենց ավանդական գործառույթից, իրենց տեղեկատվական քաղաքականության նպատակներով և խնդիրներով պայմանավորված, հանդես են գալիս որպես հանրային գիտակցության ներազդման գործիք:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցը ծագել է Ռուսական կայսրության փլուզման և Հարավային Կովկասում ազգային պետությունների ձևավորման հետևանքով: Նրա հիմքում ընկած էր ֆիզիկական բնաջնջման և մշտական վտանգից ազատվելու նպատակով ինքնորոշվելու և միասնական հայկական պետության մեջ վերամիավորվելու ձգտումը[1]: Հակամարտության արդի փուլը սկսվել է 1988թ., երբ ի պատասխան Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման պահանջի, ադրբեջանական իշխանությունները կազմակերպեցին հայ բնակչության կոտորածներ ու էթնիկ զտումներ Ադրբեջանի ողջ տարածքում: Ադրբեջանը պարբերաբար խախտում էր խաղաղ բանակցային գործընթացի սկզբունքներն ու հրադադարի ռեժիմը՝ հրահրելով լարվածություն, իսկ 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծեց ռազմական ագրեսիա: Քառասունչորս օր հետո՝ 2020թ. նոյեմբերի 10-ին, ՌԴ-ի միջնորդությամբ

[1]Տե՛ս ԱՀ ԱԳՆ պաշտոնական կայք էջ http://www.nkr.am/hy/azerbaijan-karabakh-conflict-history

հրապարակվեց հրադադարի և բոլոր ռազմական գործողությունների դադարեցման մասին եռակողմ հայտարարություն[1]:

Հաշվի առնելով Հարավային Կովկասի տարածաշրջանում Ռուսաստանի Դաշնության ունեցած ռազմական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ բնույթի հետաքրքրությունները՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին ադրբեջանա-թուրքական տանդեմի կողմից սանձազերծված ռազմական ագրեսիան առավելագույնս արտացոլվել է ռուսական ԶԼՄ-ներում, մասնավորապես՝ «Regnum» լրատվական գործակալության կայքէջում, որը պատերազմական գործողության առաջին օրից ակտիվ լուսաբանման աշխատանքներ է իրականացրել:

ԶԼՄ համակարգում լրատվական գործակալությունները ոչ միանշանակ, սակայն հաստատուն տեղ և դեր զբաղեցրին 2000-ականների սկզբի լրագրագիտության մեջ: «Regnum» ռուսական լրատվական գործակալությունը հիմնադրվել է 2002թ.: Գործակալության ամսական կտրվածքով լսարանը, LiveInternet-ի տվյալներով, կազմում է ավելի քան 4,3 մլն մարդ: TNS Gallup Media ընկերության կողմից ռուսական լրատվական կայքերի մոսկովյան լսարանի ուսումնասիրության արդյունքում՝ գործակալության ընթերցողների շրջանում գերակշռում են ղեկավարներն ու մասնագետները ՝ 72%: 2020 թվականի հուլիս ամսում միջինում կայքի օրական այցելությունների թիվը հասնում էր ≈900 հազարի, դիտումները՝ ≈1,5 միլիոնի: Նույն տարվա դեկտեմբերին՝ այցելությունների թիվը՝ ≈1,1 միլիոն, դիտումները՝≈1,5 միլիոն, ընդ որում՝ հիմնական մասը՝ 70,1%, Ռուսաստանից[2] են:

Շատ հաճախ որոշ երկրների անվտանգության ծառայություններ ինչպես նաև որոշ լրագրողներ գործակալությանը մեղադրում են քաղաքականացման մեջ: Օրինակ՝ Էստոնիայի անվտանգության ծառայությունը կարծում է, որ «Regnum»-ը սովորական լրատվական գործակալություն չէ, այն վերահսկվում է Ռուսաստանի բարձրագույն պաշտոնյաների և հատուկ ծառայությունների կողմից և օգտագործվում պետությունների իրավիճակի վրա ազդելու համար: Լատվիացի լրագրող Ի. Մուրնիեցեն պնդում է, որ «Regnum»-ը ակտիվորեն պաշտպանում էր Կրեմլի քաղաքական շահերը, օրինակ՝ ռուս-վրացական պատերազմի ընթացքում մի շարք երկրների համար տվել է միակողմանի տեղեկատվություն[3]:

44-օրյա պատերազմի առաջին օրվանից գործակալության կայքէջի թեժ գոտում ակտիվ կոճակով օրացուցային տրամաբանությամբ վավերագրական քրոնիկոն էր վարվում՝ արտացոլելով առավել հրատապ իրադարձային տեղեկատվություն՝ բնականաբար ռուսական գործոնի և միջնորդության

---

[1]*Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը (10.11.2020),URLL:https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/*

[2]*Տե՛ս* ***ИА Риа Новости, URL****: https://ria.ru/20120810/720801943.html:*

[3]*Տե՛ս* ***ИАTadviser. URL****: https://www.tadviser.ru/a/148387:*

շեշտադիր դիրքավորմամբ: Մասնավորապես, գլխավոր էջում՝ ընդգծված գույնով, տառաչափով կամ տարբերանշանով, այսպես կոչված՝ ֆլեշ կամվառվող կոճակով (flash button) առանձնացված բաժնում, պարբերական թարմացմամբ օպերատիվ տեղեկատվություն էր հաղորդվում Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ, ինչն, ըստ էության, ամբողջական պատկեր էր ստեղծում: Մի քանի նախադասությամբ տրվող տեղեկատվությունը զուգահեռվում էր նաև վերլուծական հոդվածներով, կանխատեսումներով, մեկնաբանություններով և ակնարկներով:

Հատկանշելի են գործակալության արևելյան խմբագրության գլխավոր խմբագիր և ԼՂ հարցերով ակտիվ հոդվածագիր Ստանիսլավ Տարասովի վերլուծականները, որոնք անուղղակի ակնարկներ և «կսմիթներ» են առ ԼՂ հակամարտության ուղղակի և անուղղակի կողմեր, որոնց «չհաջողված», «չհաշվարկված», «անհեռատես» քաղաքական գործողությունները, ըստ նրա, շտկելի են բացառապես ռուսական ազդեցությամբ: Այսպես՝ երբ 2020թ. սեպտեմբերի 30-ին ՄԱԿ-ը, Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակը քննարկելու համար արտահերթ նիստի արդյունքներով կողմերին կոչ է արել «անհապաղ դադարեցնել կրակը և վերադառնալ առարկայական բանակցությունների», Ս. Տարասովը գրեց. «Լեռնային Ղարաբաղ. ամեն բան որոշվում է մարտի դաշտում, ոչ թե ՄԱԿ-ում: Ռուսաստանն իր խոսքը դեռևս չի ասել»[1]: Ամենօրյա պարբերականությամբ այս տրամաբանությամբ կառուցելով իր խոսքը՝ հեղինակը զուգահեռաբար նրբորեն ակնարկում էր ԵԱՀԿ Մինսկի խմբի սահմանափակ հնարավորությունները. «Համաշխարհային դիվանագիտությունը գեթ մեկ մոտեցում չունի Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման կապակցությամբ: Այդպիսին չունի անգամ ԵԱՀԿ ՄԽ-ը: Քանի որ այդպես է, պատերազմը շարունակվելու է, և դա ամենատխուրն է: Ղարաբաղյան ճակատում առաջիկայում ճգնաժամը հաղթահարելու պահ կլինի»[2]:

Հետագա հրապարակումներում հող էր նախապատրաստվում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում երկրորդելու ՄԽ համանախագահ երկրների անփառունակ փորձերը և ընդգծելու Ռուսաստանի «հրշեջ-փրկարար» առաքելությունը՝ նրա միջնորդական ջանքերով շարունակվող և մասնավորապես թուրքական գործոնի լայն ազդեցությամբ շարունակվող արյունահեղությունը դադարեցնելու համար: Այսպես, կրակի և ռազմական գործողությունների դադարեցման մի քանի փորձերը վերլուծելիս հեղինակը նկատում է, որ «հենց Պուտինը, ոչ թե Ֆրանսիայի նախագահ Է.Մակրոնը կամ ԱՄՆ նախագահ Դ.Թրամփը, կարողացավ գտնել ղարաբաղյան պատերազմի դիվանագիտական ելքը՝ որոշ առումներով խաղասեղանին դնելով

---

[1] *Нагорный Карабах: всё решается на поле брани, а не в ООН, URL: https://regnum.ru/news/polit/3076584.html*

[2] *Нагорный Карабах: война публичных заявлений и сложных дипломатий, URL: https://regnum.ru/news/3082766.html:*

սեփական քաղաքական հեղինակությունը»[1]՝ այդպիսով «սանձելով Ալիևին և Էրդողանին»[2]: Նոյեմբերի 9-ի հայտարարությունից օրեր առաջ հեղինակը զգուշացնում է, որ «միջնորդի դերն անցնում է Ռուսաստանին, իսկ Թուրքիան մնում է ակտիվ դերակատար Ադրբեջանի կողմից և դժվար թե կարող է հավակնել մեծ աշխարհաքաղաքական շահաբաժնի»[3], ապա հայտարարում, թե Ռուսաստանը վերադառնում է Լեռնային Ղարաբաղ[4]:

Ուշադրության է արժանի նաև այն, որ պատերազմի օրերին պատմական-իրավական փաստերի վկայակոչմամբ հանդես էր գալիս արցախցի քաղաքագետ, փիլիսոփայության դոկտոր Ալեքսանդր Մանասյանը: Վերջինս ապացուցում էր Ադրբեջանի քարոզչական թեզերի սին լինելը՝ այն փաստարկելով պատմական, քաղաքական և իրավական հիմնավորումներով[5,6,7] ՝ «Բաքուն ինքն է խոստովանել՝ Ղարաբաղը Ադրբեջան չէ»: Իրավունքի այս համատեքստում շեշտադրվում էր հատկապես ազգերի ինքնորոշման իրացված փաստը:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում գործակալության հրապարակումների վերլուծությունը հանգեցնում է եզրակացության՝ այն պաշտոնական Մոսկվայի ոչ պաշտոնական քաղաքական խոսափողն էր, որի միջոցով ոչ միայն ամենօրյա նպատակային հրապարակումներով ձևավորվում էր Ռուսաստանի՝ լեռնային ղարաբաղյան հակամարտության՝ այլընտրանք չունեցող միջնորդի և Լեռնային Ղարաբաղի ապագա անվտանգության երաշխավորի կերպարը: Ուստի բնական է, որ «Regnum»-ը՝ որպես լրատվական գործունեություն իրականացնող լրատվամիջոց, մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որն էապես ընդգծվել է 44-օրյա պատերազմի օրերին:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը :

---

[1] *Нагорный Карабах: Путин бросил на стол свою политическую репутацию: URL: https://regnum.ru/news/polit/3086576.html*

[2] *Нагорный Карабах: кто и как укротит Алиева и Эрдогана: URL: https://regnum.ru/news/polit/3092645.html*

[3] *Нагорный Карабах: Алиев и Эрдоган остаются без Европы: URL: https://regnum.ru/news/polit/3108589.html*

[4] *Нагорный Карабах: русские военные возвращаются в Степанакерт: URL: https://regnum.ru/news/polit/3109920.html*

[5] *Баку сам признал: Нагорный Карабах – это не Азербайджан: URL:https://regnum.ru/news/polit/3104048.html*

[6] *Историю нельзя вытеснить из урегулирования карабахского конфликта: URL:https://regnum.ru/news/polit/3098262.html*

[7] *Где бьется территориальный нерв войны в Нагорном Карабахе: URL:https://regnum.ru/news/polit/3088513.html*